ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 01/19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Բյուրեղավան 10 հունվարի 2019թ.

2019 թվականի հունվարի 10-ին, ժամը 14:00-ին, Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան բնակավայրում՝ Բյուրեղավանի համայնքապետարանի թիվ 1 վարչական շենքում, տեղի ունեցավ համայնքի ավագանու որոշումների նախագծերի և այլ առաջարկությունների նախնական քննարկման նպատակով ստեղծված ֆինանսական, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական գործող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստ՝ «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին» որոշումների նախագծերի թեմաներով:

Նիստին մասնակցում էին Հանձնաժողովի նախագահ Արման Օհանյանը, անդամներ Արման Խանզադյանը, Արտյոմ Ավագյանը, համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանը, Հանձնաժողովի աշխատանքներին աջակցող համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ջարուհի Ապրեսյանը:

Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց նիստի օրակարգը՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին,
2. Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:

համայքնի ավագանու որոշմուների նախագծերի քննարկում:

Օրակարգի առաջին հարցի շուրջ Լ. Պողոսյանը ներկայացրեց, որ Բյուրեղավան համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվող նախագիծը մշակվել է՝ առաջնորդվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի 2018 թվականի բյուջեի տարեվերջի ազատ մնացորդը՝ 41804,4 հազար դրամը (41804,1 հազար դրամը՝ վարչական բյուջեի տարեվերջի մնացորդ, 0,3 հազար դրամը՝ ֆոնդային բյուջեի տարեվերջի մնացորդ), որն ամբողջությամբ ուղղվում է 2019 թվականի համայնքի բյուջեի ֆոնդային մաս:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտություն է առաջացել համայնքի 2019 թվականի բյուջեի դեֆիցիտը (պակասուրդը)՝ << 37 700,0 >> հազար դրամ, փոփոխել <<41804,4>> հազար դրամով:

Բյուրեղավան համայնքի 2019 թվականի բյուջեի ծախսերի ընդհանուր գումարը ծրագրվել է 346463,6 հազար դրամ:

Համայնքի բյուջեով նախատեսվել է պուրակի հիմնանորոգման աշխատանքների կատարման համար ծախս՝ <<5113>> հոդվածով 4104,0 հազար դրամ:

Որոշվեց՝

հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 71-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Լ.Պողոսյանը ներկայացրեց Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքը: Թերակատարում է առաջացել Բյուրեղավանի << Արև>> մանկապարտեզ ՆՈՒՀ ՀՈԱԿ-ի վարձավճարների գծով, ինչը կապված է բազմազավակ ընտանիքների նկատմամբ սահմանված արտոնությունների, երեխաների հաճախելիության հետ: Խնդիրներ են առաջացել նաև աղբահանության վճարների գծով գյուղական բնակավայրերում: Տեղական տուրքերը գույքահարկի, հողի հարկի, վարձակալական հողերի գծով կատարվել են ըստ նախատեսվածի:

Որոշվեց՝

հավանություն տալ Բյուրեղավան համայնքի 2018 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին որոշման նախագծին և ներկայացնել ավագանու նիստին:

Կողմ- 3 Դեմ- 0

Նիստն ավարտվեց:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Արման Օհանյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Արման Խանզադյան

_____ Արտյոմ Ավագյան